ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 25/40-Հ «11» 02 2025 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ-ում կազմակերպել բակալավրի կրթական ծրագրերի (այսուհետ՝ ԿԾ) բարելավման դրամաշնորհի տրամադրման մրցույթ:
2. Հաստատել մրցույթի անցկացման կարգը՝ համաձայն Հավելվածի:
3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորին:
4. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին:

ՌԵԿՏՈՐ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Կցված է ԵՊՀ ռեկտորի 11.02 թ. 25/4Հ հրամանին

ԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում բակալավրի ԿԾ (կրթական ծրագիր) բարելավման համար դրամաշնորհի (այսուհետ՝ Դրամաշնորհ) հատկացման պահանջները և մրցույթի անցկացման կարգը:

1.2. Դրամաշնորհի հատկացման նպատակը միջազգային չափանիշներին համապատասխան որակյալ կրթության տրամադրման և ԿԾ մրցունակության խթանումն է:

1.3. Դրամաշնորհի հատկացման և մրցույթի իրականացման գործընթացները կազմակերպում և համակարգում է ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

1.4. Դրամաշնորհի հայտի նախնական փորձաքննությունն իրականացնում է ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը:

2. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

2.1. Դրամաշնորհի համար մրցույթին մասնակցելու հայտը՝ կից փաստաթղթերով, ուսումնական ստորաբաժանումը կարող է ներկայացնել Վարչություն

յուրաքանչյուր տարվա մարտի 10-ից 30-ն ընկած ժամանակահատվածում՝ ուղարկելով այն education@ysu.am էլ. փոստին:

Նշված ժամկետի ավարտից հետո ներկայացված հայտերը քննարկման ենթակա չեն:

2.2. Մրցութային փաթեթը պետք է ներառի հետևյալ փաստաթղթերը՝

- ուսումնական ստորաբաժանման ղեկավարի զեկուցագիրը Դրամաշնորհին մասնակցելու վերաբերյալ,
- ԿԾ վերանայման և բարելավման աշխատանքներում ներգրավված անձանց (ընդհանուր թիվը չպետք է գերազանցի 5-ը, այդ թվում՝ ծրագրի ղեկավարը, հրավիրյալ պրոֆեսոր, տվյալ ԿԾ դասախոս, ուսանող/շրջանավարտ) ինքնակենսագրությունները,
- կրթական ծրագրի բարելավման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորում՝ ստորագրված ԿԾ ղեկավարի կողմից,
- ԿԾ վերլուծությունը, թերի կողմերի և հիմնական ռիսկերի նկարագրությունը՝ հիմնված ԿԾ մշտադիտարկման (մոնիթորինգի) արդյունքների վրա՝ ըստ սահմանված ձևաթերթի (կցվում է սույն կարգին),
- ուսումնական ստորաբաժանման գիտական խորհրդի որոշման քաղվածքը՝ Դրամաշնորհին դիմելու երաշխավորման վերաբերյալ,
- նախահաշիվը (կցվում է սույն կարգին):

2.3. Դրամաշնորհի հատկացման համար մրցույթի անցկացման և հայտերի փորձաքննության կազմակերպումը համակարգում է ԵՊՀ մեթոդական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ):

2.4. Հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, Խորհրդի կողմից կազմակերպվում են Դրամաշնորհի հայտերի փորձաքննություն (ներառյալ ՈԱԿ-ի նախնական փորձաքննությունը) և փորձաքննության արդյունքների հաստատում:

2.5. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի 2/3-ը:

2.6. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

2.7. Խորհրդի կողմից ֆինանսավորման երաշխավորված կրթական ծրագրերի ցանկը ներակայացվում է ռեկտորի հաստատմանը:

3. ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. Դրամաշնորհի ղեկավար կարող է լինել կրթական ծրագրի ղեկավարը:

3.2. Խմբի անդամներից առնվազն մեկը պետք է լինի հրավիրյալ պրոֆեսոր, ով ունի գիտական աստիճան և օտարերկրյա բուհում Դրամաշնորհին առնչվող կրթական գործունեություն է ծավալում:

3.3. Խմբի երրորդ անդամը պետք է լինի ԵՊՀ աշխատող և տվյալ ԿԾ-ում դասավանդի առնվազն մեկ մասնագիտական դասընթաց:

3.4. Խմբում պետք է ընդգրկվի տվյալ ծրագրի ավարտական կուրսի ուսանող կամ շրջանավարտ, ում ՄՈԳ-ը առնվազն 18 է:

3.5. Ուսումնական ստորաբաժանման ղեկավարը և գրասենյակի ղեկավարը չեն կարող լինել խմբի անդամ:

3.6. Խմբում հասարակական կարգով կարող է ներգրավվել նաև տվյալ մասնագիտական ոլորտի գործատու, ով ունի առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ:

4. ԽՄԲՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀՐԱՎԻՐՅԱԼ ՊՐՈՖԵՍՈՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4.1. Հրավիրյալ պրոֆեսոր կարող է լինել օտարերկրյա համալսարանում համապատասխան մասնագիտական ոլորտում գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվող այն անձը, ում Հիրշի ինդեքսն (h-index) ըստ «Scopus» գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների՝ առնվազն 3 է՝ հումանիտար և 5՝ բնագիտամաթեմատիկական ուղղությունների համար:

4.2. Աշխատանքների իրականացման ընթացքում պրոֆեսորն աշխատում է առցանց ձևաչափով (4 ամիս):

4.3. Պրոֆեսորն իր պաշտոնական էլեկտրոնային հասցեից Վարչության էլեկտրոնային հասցեին պետք է ուղարկի իր կենսագրական տվյալները և հաստատող նամակ՝ նշելով, որ ծանոթ է սույն կարգով նախատեսված իր պարտականություններին և գործառույթներին:

5. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

5.1. Ծրագրի իրականացման ժամանակահատվածում ներկայացվում է 2 զեկույց՝ միջանկյալ և ամփոփիչ.

- միջանկյալ զեկույց (ստորագրված ուսումնական ստորաբաժանման ղեկավարի կողմից), որը ներկայացվում է աշխատանքների իրականացման երկրորդ ամսվա ավարտին: Զեկույցում ներկայացվում են այդ փուլում կատարված աշխատանքների արդյունքները, ինչպես նաև հաշվետվություն՝ իրականացված բենչմարքի վերաբերյալ. բենչմարքինգի իրականացման համար հիմք է ծառայում ակադեմիական ուղղությունների համաշխարհային վարկանիշավորման ShanghaiRanking's Global Ranking (Շանհայի ցանկի՝ (https://www.shanghairanking.com/rankings/gras/2024) կամ Times Higher Education (Թայմս Հայեր Էդուքեյշն) ակադեմիական ուղղությունների վարկանիշավորման

ցանկում (https://www.timeshighereducation.com/world-university-rankings/by-subject) (մինչև 150-րդ դիրք) ընդգրկված արտասահմանյան որևէ բուհի բակալավրի համապատասխան կրթական ծրագիրը,

- ամփոփիչ զեկույց, որը ներկայացվում է կարգով սահմանված ժամկետի ավարտին: Զեկույցում ներկայացվում են ծրագրի արդյունքները և բարելավված դասընթացների ցանկը,
- ԿԾ հիմնական մասնագիտական դասընթացների (առնվազն 10 դասընթաց) վերանայված նկարագրիչները և պլանները,
- վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման նոր մեթոդների և գնահատման արդյունահենք չափանիշների նկարագրություն վերանայվող դասընթացների համար:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Դրամաշնորհի մրցույթը հայտարարվում է տարին մեկ անգամ: Ծրագրի ընդհանուր տևողությունը 4 - 6 ամիս է:

6.2. Դրամաշնորհի ընդհանուր ֆինանսավորման սկիզբը հոկտեմբերի 1-ն է, ավարտը՝ մարտի 30-ը:

6.3. Դրամաշնորհի ֆինանսավորման առավելագույն չափը չի կարող գերազանցել 3.5 մլն ՀՀ դրամը:

6.4. Դրամաշնորհի իրականացման համար դրամաշնորհի ղեկավարը չի վարձատրվում:

6.5. Դրամաշնորհի ղեկավարի համար լրիվ աշխատանքային ծանրաբեռնվածություն է հաշվարկվում 600 ժամը:

6.6. Պրոֆեսորի աշխատանքի վարձատրության ընդհանուր գումարը 4 ամսվա համար չի կարող գերազանցել 1.5 մլն ՀՀ դրամը:

6.7. Դրամաշնորհի ֆինանսավորումը կատարվում է ստորև նշված ժամանակացույցին համապատասխան՝

- Դրամաշնորհի ընդհանուր գումարի 50 տոկոսը տրվում է պայմանագրի կնքման ամսաթիվը ներառող ամսվա վերջին, իսկ մնացյալ 50 տոկոսը՝ Դրամաշնորհի կատարման վերաբերյալ միջանկյալ հաշվետվության արդյունքների հիման վրա:
- Դրամաշնորհի մնացած գումարը բաշխվում է հավասարաչափ՝ ամսական վճարման սկզբունքով, մինչև դրամաշնորհի ժամկետի ավարտը:

6.8. Դրամաշնորհի կատարման ընթացքում սույն կարգով սահմանված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում ֆինանսավորումը կարող է դադարեցվել, իսկ ուսումնական ստորաբաժանումը՝ երեք տարի ժամկետով զրկվել դրամաշնորհին դիմելու իրավունքից:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Կրթական ծրագրի վերլուծությունը ներառում է.

1. Բարելավման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորում (հիմնական նպատակները) (առնվազն 400 բառ):

2. Կրթական ծրագրի թույլ կողմերը (առնվազն 400 բառ):

3. Առաջարկներ թույլ կողմերի շտկման կամ մեղմացման վերաբերյալ (առնվազն 400 բառ):

4. Բարելավման ներկայացվող դասընթացների ցանկը:

5. Ակնկալվող արդյունքները (առնվազն 250 բառ):

ՆԱԽԱՀԱՇԻՎ[1]

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (*ներառյալ եկամտային հարկը*)

Ազգանուն անուն հայրանուն	ամսական	ամիսների քանակ	պահանջվող գումար
1)			
2)			
3)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
1)	
...	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	

ՈՒՍ ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) *(ազգանուն, անուն, հայրանուն)*

Գլխավոր հաշվապահ՝ _____ _____
(ստորագրություն) *(ազգանուն, անուն, հայրանուն)*

[1] Ծախսային հոդվածների միջև վերաբաշխումները չեն կարող գերազանցել 10 % -ը, աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների վերաբերյալ ծախսային հոդվածում վերաբաշխումներ չեն կարող լինել: